ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/04

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.01.2018թ. թիվ 03/26-3/244-18 գրությամբ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00144521) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.01.2018թ. թիվ 01/61-29 գրության հիման վրա, 11.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 09.01.2018թ. թիվ 01/61-29 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 10.03.2017 թվականին կնքված «ԵՔ–ԲԸԾՁԲ–17/91» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը համապատասխան ֆինանսնական միջոցներ նախատեսվելու դեպքում ստանձնում է վարչական շենքի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ էր սահմանված 25.12.2017թ.:

Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի մատուցվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուժացած օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 տոկոսի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Գոռ Մուրադյանը և Վարդան Դեմիրճյանը :

3. <u>«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 23.01.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«10.03.2017թ.ին Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև կնքվել է ծառայությունների մատուցման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ստանձնում է Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ծառայությունների մատուցման պարտավորությունը: Պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2017թ. դեկտեմբերի 25-ը:

Համաձայն նույն պայմանագրի տեխնիկական բնութագրի գնման ժամանակացույցի՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նկարագրի 6-րդ կետով պահանջվում է ստուգել երկու վերելակների տեխնիկական անվտանգության փաստաթղթերը (վկայագիր, անձնագիր, հրահանգավորման մատյան), իսկ 8-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է ստուգել մասնագետ կադրերի կողմից կատարված փորձարկման ակտերը:

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն բացահայտված թերությունների վերացման միջոցառումների վերաբերյալ 18.12.2017թ. և 25.12.2017թ. գրավոր (կցվում են) դիմել է Պատվիրատուին՝ ներկայացնելով հետևայլը. «Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» 22.11.2017թ. պայմանագրով իրականացվող ք. Երևան, Գայի 19 հասցեում գտնվող Երևանի Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքում շահագործվող մարդատար վերելակների (2 հատ) տեխնիկական անվտանգության փորձաքննության ընթացքում բացահայտված թերությունների վերացման վերաբերյալ:

Բացահայտված թերությունների հակիրճ շարադրանքը՝

1) ներկայացնել մարդատար վերելակների նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագրերը և անձնագրերը, որպես արտադրական վտանգավոր օբյեկտ ռեեստրի գրանցման ԱՎՕ վկայականները (Տեխնիկական կանոնակարգ):

2) ներկայացնել մարդատար վերելակների փորձարկման ակտերը (Տեխնիկական կանոնակարգ):

3) ներկայացնել մարդատար վերելակները սպասարկող որակավորված ինժեներա-տեխնիկական անձնակազմի հրամանները և որակավորման վկայականները («Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի բ կետ):

Հաշվի առնելով բացահայտված թերությունները՝ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն առաջարկել է Երևանի քաղաքապետարանին վերացնել բացահայտված թերությունները՝ հետագա փորձագիտական եզրակացությունը կազմելու նպատակով:

Վերը նշված գրությունների վերաբերյալ պատասխան չստանալով՝ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն 28.12.2017թ.-ին թիվ 40 փ-17 գրությամբ միակողմանի լուծել է 10.03.2017թ.-ի կնքված թիվ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագիրը: Համաձայն «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի 28.12.2017թ. թիվ 40 փ-17 գրության՝ «Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագրով իրականացվող ք. Երևան, Գայի 19 հասցեում գտնվող Երևանի Նոր Նորք վարչական շենքում շահագործվող մարդատար վերելակների (2 հատ) տեխնիկական անվտանգության փորձաքննության շրջանակներում պարզվեց, որ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի շենքում շահագործվող մարդատար վերելակները ոչ մի անգամ չեն անցել տեխնիակական անվտանգության փորձաքննություն: Վերելակները, համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, պետք է գրանցվեին որպես արտադրական վտանգավոր օբյեկտ լիազոր մարմնի (ԱԻՆ) ռեեստրում: «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի փորձագետներին չի ներկայացվել մարդատար վերելակների նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագրերը և անձնագրերը, մարդատար վերելակների փարձարկման ակտերը, սպասարկող որակավորման ինժեներա-տեխնիկական անձնակազմի հրամանները և որակավորման վկայականները, ուստի հաշվի առնելով, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական

կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետի տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվեուց հետո, խնդրում ենք լուծել 10.03.2017թ. կնքված ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագիրը»:

Երևանի քաղաքապետարանը, անտասելով Ընկերության կողմից 18.12.2017թ. և 25.12.2017թ.-ի թերությունների վերացման միջոցառումների վերաբերյալ գրությունները, ինչպես նաև 28.12.2017թ.-ին թիվ 40 փ-17 գրությամբ 10.03.2017թ. կնքված թիվ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագիրը լուծելու մասին գրությունը, 29.12.2017թ. ինքն է միակողմանի լուծել պայմանագիրը:

Մասնավորապես, Երևանի քաղաքապետարանը 29.12.2017թ. թիվ 61/84283հ գրությամբ հայտնել է հետևյալը. «Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ստանձնում է վարչական շենքի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակցույցի պահանջների: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետով»: Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանված 25.12.2017թ.: Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի մատուցվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 տոկոսի չափով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողը խախտել է Ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված: Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված...:

Գտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանը 29.12.2017թ. լուծելով Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով պայմանագիրը, խախտել է ՀՀ օրենսդրության պահանջները: Մասնավորապես.

• Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով պայմանագրով նախատեսվում էր իրականացնել Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության ծառայությունների

մատուցում: Մինչդեռ, պայմանագրի կատարման փուլում «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից բազմիցս փորձ է արվել պարզելու, թե Նորք վարչական շրջանի վարչական շենքի վերելակները արդյոք օրենքով սահմանված կարգով գրանցված են արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում), թե՝ ոչ: Այդ նպատակով «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանից գրավոր պահանջել է ներկայացնել վերելակների արտադրական վտանգավոր օբյեկտ հանդիսանալու ռեեստրի գրանցման ԱՎՕ վկայականները (Տեխնիկական կանոնակարգ): Սակայն, պատվիրատուի կողմից այդպես էլ չեն ներկայացվել այդ վկայականները, ինչը հիմք է տալիս «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին ենթադրելու, որ շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտները՝ տվյալ դեպքում վերելակները, արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցված չեն: Իսկ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվելուց հետո: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետի պահանջներից բխում է, որ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն իրավունք չուներ իրականացնելու տեխնիկական անվտանգության փորձաքննությունն շահագործվող արտադրական վտանգավոր այն օբյեկտների (տվյալ դեպքում վերելակների) նկատմամբ, եթե դրանք օրենքով սահմանված կարգով գրանցված չեն արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում):

• Համաձայն նույն պայմանագրի տեխնիկական բնութագրի գնման ժամանակացույցի՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նկարագրի 6-րդ կետով «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ից պահանջվում էր ստուգել երկու վերելակների տեխնիկական անվտանգության փաստաթղթերը (վկայագիր, անձնագիր, հրահանգավորման մատյան), իսկ 8-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է ստուգել

մասնագետ կադրերի կողմից կատարված փորձարկման ակտերը: Մինչդեռ Երևանի քաղաքապետարանի կողմից «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին այնդպես էլ չեն ներկայացվել տեխնիկական անվտանգության փաստաթղթերը (վկայագիր, անձնագիր, հրահանգավորման մատյան), ինչպես նաև փորձարկման ակտերը, ինչի պայմաններում, բնականաբար, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն չէր կարող ստուգել չներկայացված փաստաթղթեր:

• Ինչպես արդեն նշվել էր, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն դեռևս 28.12.2017թ. միակողմանի լուծել էր 10.03.2017թ. կնքված թիվ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագիրը, մինչդեռ Երևանի քաղաքապետարանը, անտասելով Ընկերության նշված գրությունը, մեկ օր անց, 29.12.2017թ. ինքն է միակողմանի լուծել պայմանագիրը:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքների պայմաններում «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված էր հնարավորությունից կատարելու 10.03.2017թ. Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև կնքված վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ծառայությունների մատուցման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով պայմանագիրը, քանզի նախ, պայմանագրով նախատեսված տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ էր, որպեսզի վերելակները գրանցված լինեին արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում), ինչը տվյալ դեպքում առկա չէր, իսկ պայմանագրի տեխնիկական բնութագրի գնման ժամանակացույցի՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նկարագրի 6-րդ և 8-րդ կետով նշված փաստաթղթերի ստուգումը հնարավոր չէր իրականացնել, քանզի այդ փաստաթղթերը Երևանի քաղաքապետարանի կողմից չեն տրամադրվել «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին՝ դրանք ուսումնասիրելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոշարադրած փաստերը՝ գտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանը, միակողմանի լուծելով Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք հաշվի առնել նշված փաստարկները, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Լեոնիդ Բեգլարյանը, ինչպես նաև լիազորված ներկայացուցիչներ Տիգրան Քոչարյանը և Արթուր Պարանյանը::

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/04 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/244-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 09.01.2018թ. թիվ 01/61-29 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ–ԲԸԾՁԲ–17/91» ծածկագրով գնման պայմանագիրը, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 23.01.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին ուղղված Երևանի քաղաքապետարանի 29.12.2017թ. թիվ 61/84283h գրությունը, «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի՝ ի լրումն 23.01.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշմանը 06.02.2018թ. ներկայացված գրությունը և դրան կից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 01.02.2018թ. թիվ 7/271/1058-18 գրությունը.

Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքվել է «ԵՔ–ԲԸԾՁԲ–17/91» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Կատարողը համապատասխան ֆինանսնական միջոցներ նախատեսվելու դեպքում ստանձնում է վարչական շենքի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

• 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

• 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է թվով երկու մարդատար վերելակների համար իրականացնել մի շարք ստուգումներ, այդ թվում՝ ստուգել երկու վերելակների տեխնիկական անվտանգության փաստաթղթերը (վկայագիր, անձնագիր, հրահանգավորման մատյան), ինչպես նաև ստուգել մասնագետ կադրերի կողմից կատարված փորձարկման ակտերը:

Պայմանագրով պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 25.12.2017թ.:

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն 18.12.2017թ. և 25.12.2017թ. գրություններով դիմել է Պատվիրատուին՝ ներկայացնելով բացահայտված թերությունների վերացման միջոցառումների ծրագիրը, որում ներկայացվել են Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև

կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» 22.11.2017թ. պայմանագրով իրականացվող ք. Երևան, Գայի 19 հասցեում գտնվող Երևանի Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքում շահագործվող մարդատար վերելակների (2 հատ) տեխնիկական անվտանգության փորձաքննության ընթացքում բացահայտված թերությունների վերացման վերաբերյալ հետևյալ դիտարկումները.

Բացահայտված թերություններ հակիրճ շարադրանքը՝

1) ներկայացնել մարդատար վերելակների նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագրերը և անձնագրերը, որպես արտադրական վտանգավոր օբյեկտ ռեեստրի գրանցման ԱՎՕ վկայականները (Տեխնիկական կանոնակարգ):

2) ներկայացնել մարդատար վերելակների փորձարկման ակտերը (Տեխնիկական կանոնակարգ):

3) ներկայացնել մարդատար վերելակները սպասարկող որակավորված ինժեներա-տեխնիկական անձնակազմի հրամանները և որակավորման վկայականները («Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի բ կետ):

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն առաջարկել է Երևանի քաղաքապետարանին մինչև 15.01.2017թ. վերացնել բացահայտված թերությունները՝ հետագա փորձագիտական եզրակացությունը կազմելու նպատակով:

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն 28.12.2017թ. թիվ 40 փ-17 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հայտնելով, որ Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91 պայմանագրով իրականացվող ք. Երևան, Գայի 19 հասցեում գտնվող Երևանի Նոր Նորք վարչական շենքում շահագործվող թվով 2 մարդատար վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության շրջանակներում պարզվել է, որ նշված վերելակները երբևէ չեն ենթարկվել տեխնիակական անվտանգության փորձաքննության: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, վերելակները պետք է գրանցվեին որպես արտադրական վտանգավոր օբյեկտ լիազոր

մարմնի (ԱԻՆ) ռեեստրում: «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի փորձագետներին չեն ներկայացվել մարդատար վերելակների նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագրերը և անձնագրերը, մարդատար վերելակների փարձարկման ակտերը, սպասարկող որակավորման ինժեներա-տեխնիկական անձնակազմի հրամանները և որակավորման վկայականները, ուստի հաշվի առնելով, որ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասի «գ» կետի համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվեուց հետո, Ընկերությունը խնդրել է լուծել Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ–ԲԸԾՁԲ–17/91» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատվիրատուն 29.12.2017թ. թիվ 61/84283հ գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, միաժամանակ այդ մասին ծանուցումը հրապարակելով տեղեկագրում:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Խորհուրդն՝ ընդունելով ի գիտություն Ընկերության այն պնդումը, որ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով այդ օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվելուց հետո, Ընկերությունից պահանջեց ներկայացնել իրավասու մարմնի կողմից տրամադրած փաստաթղթային ապացույց առ այն, արդյո՞ք ք. Երևան, Գայի 19 հասցեում գտնվող Երևանի Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքում շահագործվող մարդատար վերելակները գրանցված և հաշվառված են արտադրական վտանգավոր օբյեկտների պետական գրանցամատյանում, թե՝ ոչ:

Ի լրումն 23.01.2018թ. գրությամբ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հայտնած դիրքորոշմանը, Ընկերությունը 06.02.2018թ. գրությամբ

ներկայացրեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 01.02.2018թ. թիվ 7/271/1058-18 գրությունը, որով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ ք. Երևան, Գայի պողոտա 19 շենքում գտնվող վերելակները գրանցված չեն արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝

- 11-րդ հոդվածի 8-րդ մասի «գ» կետի համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (այսուհետ՝ ռեեստր) գրանցվեուց հետո:
- 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտները հաշվառելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները գրառելու, վերլուծելու նպատակով լիազոր մարմինը վարում է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը:
- 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ռեեստրում գրանցման ենթակա է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող յուրաքանչյուր արտադրական վտանգավոր օբյեկտ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու

պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը 18.12.2017թ. և 25.12.2017թ. գրություններով դիմել է Պատվիրատուին՝ ներկայացնելով բացահայտված թերությունների վերացման միջոցառումների ծրագիրը, և պահանջելով ներկայացնել Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/91» պայմանագրի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը (վերելակների նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագրերը և անձնագրերը, որպես արտադրական վտանգավոր օբյեկտ ռեեստրի գրանցման ԱՎՕ վկայականները, փորձարկման ակտերը, սպասարկող անձնակազմի հրամանները և որակավորման վկայականները և այլն), սակայն նշված փաստաթղթերը Պատվիրատուի կողմից չեն նեչկայացվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ք. Երևան, Գայի պողոտա 19 շենքում գտնվող վերելակները գրանցված չեն արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում:

Խորհուրդը գտնում է, որ նման հանգամանքներում «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել կատարելու Երևանի քաղաքապետարանի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի միջև 10.03.2017թ.ին կնքված վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության ծառայությունների մատուցման պայմանագիրը, քանի որ պայմանագրով նախատեսված տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայման է հանդիսանում շահանգործվող օբյեկտի (մարդատար վերելակի) արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստրում) գրանցված լինելու հանգամանքը, ինչը տվյալ դեպքում առկա չէ, ինչպես նաև հնարավորություն չի ունեցել պայմանագրի տեխնիկական բնութագրի գնման ժամանակացույցի 6-րդ և 8-րդ կետով նշված փաստաթղթերի ստուգումն իրականացնելու, քանի որ նշված փաստաթղթերը Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերությանը չեն տրամադրվել:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշում ընդունելով՝ Պատվիրատուն խախտել է Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2018թ. «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00144521) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**